# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/250 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | բացակայում է | բացակայում է | RAL 6038 | բացակայում է | 1. Աղբի տեսակավորման թափոնամանների նկարագիր Ծավալը՝ 1100լ, Կառուցվածքը, պարամետրերը և անվտանգության պահանջները պետք է համապատասխանեն EN 840-2:2020 ստանդարտին, չհաշված դիմային կափարիչի առկայությունը: Նյութը՝ Բարձր խտության ցածր ճնշման առաջնային հումքի պոլիէթիլեն (HDPE) Գույնը՝ կանաչ (RAL 6038) Չափսերը՝ երկարություն - 1375մմ (+/-2%), լայնություն - 1075 (+/-2%), բարձրություն -1350մմ (+/-2%); Անիվներ՝ Թափոնամանը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը` ռետինե, բարձր խտայնության - 200 մմ տրամագծով: Անվադողերը /անիվները/ պետք է ունենան փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղածիգ առանցքի շուրջ; Դիմային կափարիչ` 500x500 մմ (+/-50) կամ 500x600մմ (+/-50) չափերով; Բեռնատարողունակություն` 440կգ, ներառյալ աղբամանի քաշը; Քաշը` 50 կգ ±5% 2. Թափոնամանը պետք է լինի EN 840-2:2020 ստանդարտի պահանջներին համապատասխան` • Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից. • դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներից. • ճկուն. • Հրդեհակայուն /չբոցավառվող/ • |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հարվածակայուն: 3. Վերևի մասում պետք է ունենա ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող կափարիչ` - Կափարիչը կարող է համալրված լինել ոտնակով` ոտքով բացելու համար: - Կափարիչի վրա շրջանաձև բացվածք` նախատեսված ապակե առարկաների համար: - Աղբարկղի աջ և ձախ կողմերում պետք է լինեն երկուական բռնակներ: 4. Թափոնամանները պետք է ունենան համարակալում, որը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ և ծխախոտը աղբարկղ գցելն արգելող զգուշացում: 5. Թափոնամանները պետք է մատակարարվեն ուղղանկյուն կպչուն 170x470 մմ չափսերի պիտակներով, տպագրված տվյալ աղբամանի համար նախատեսված աղբի հայերեն և անգլերեն անվանումով, որի տեսքը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Թափոնամանների` ներառյալ բաղադրիչների համար մատակարարը պետք է ապահովի երաշխիքային սպասարկում: Երաշխիքային ժամկետը` ոչ պակաս |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | քան մեկ տարի: 6. Թափոնամանների նմուշը նախապես պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ: • Մատակարարը մինչև Ապրանքը հանձնելը, պետք է Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքի (առանց դիմային կափարիչի (500մմ x 500մմ կամ 500մմ(+/- 50) x 600մմ(+/- 50)) EN 840-2:2020 ստանդարտի չափորոշիչներին և պահանջներին համապատասխանության վերաբերյալ: Մատակարարը կարող է իր հայեցողությամբ Պատվիրատուին ներկայացնել նաև ՀՀ-ում ճանաչելի համապատասխանության գնահատման հավաստագիր՝ EN 840-2:2020 ստանդարտին համապատասխանության վերաբերյալ: Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելու, կամ |

առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելու դեպքում, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից: • Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ կերպ ծանրաբեռնված լինի գույքային իրավունքով: • Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրության այլ անհամապատասխանություններ:

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/250 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |